ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Արգենտինայի Հանրապետության միջև մշակույթի և կրթության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Արգենտինայի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով 1992 թվականի հունիսի 11-ին երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև ստորագրված Փոխըմբռնման հուշագիրը,

ցանկանալով զարգացնել համագործակցությունը մշակույթի և կրթության բնագավառներում,

վստահ լինելով, որ նման համագործակցությունը կնպաստի Կողմերի միջև բարեկամական հարաբերությունների խորացմանը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կնպաստեն մշակույթի, կրթության, ռադիոյի, հեռուստատեսության և կինոյի բնագավառներում համագործակցությանը, մասնավորապես՝

ա) մանկավարժների և մշակույթի ու կրթության բնագավառների այլ մասնագետների փոխանակման,

բ) համերգների, ցուցահանդեսների, թատերական ներկայացումների և արվեստի այլ միջոցառումների կազմակերպման,

գ) գեղարվեստական գրականության հրապարակման, սույն Համաձայնագրում նշված ոլորտներին վերաբերող գրականության փոխանակման,

դ) ոչ առևտրային հիմունքներով կինոժապավենների ցուցադրման միջոցով:

Հոդված 2

Կողմերից յուրաքանչյուրը, իր հնարավորությունների սահմաններում և փոխադարձ հիմունքներով, պարտավորվում է մյուս Կողմի քաղաքացիներին տրամադրել կրթաթոշակներ՝ կրթական հաստատություններում ուսանելու և հետազոտական աշխատանքներ կատարելու համար:

Հոդված 3

Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին օրենսդրության համաձայն, կուսումնասիրի մյուս Կողմի տարածքում ստացած կրթության փոխադարձաբար ճանաչման պայմանները:

Հոդված 4

Կողմերը կխթանեն մասնագիտական վերապատրաստման և տեխնոլոգիական կրթության բնագավառում համատեղ ծրագրերի զարգացմանը: Այդ ծրագրերը կապահովեն սերտ կապեր կրթական, տեխնոլոգիական և արտադրական ոլորտների միջև, ինչպես նաև կնպաստեն այդ բնագավառների մասնագետների փոխանակմանը:

Հոդված 5

Յուրաքանչյուր Կողմ իր աջակցությունը կցուցաբերի իր տարածքում կազմակերպվող գիտաժողովներին, համաժողովներին, փառատոներին և միջազգային այլ միջոցառումներին մյուս Կողմի ներկայացուցիչների մասնակցությանը:

Հոդված 6

Կողմերը կխթանեն կազմակերպությունների և անհատների միջև համագործակցությունը, որոնց գործունեությունը կապված կլինի սույն Համաձայնագրում նշված բնագավառների հետ:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի դրույթներն իրականացնելու նպատակով Կողմերը դիվանագիտական ուղիներով յուրաքանչյուր երեք տարին մեկ կմշակեն մշակույթի և կրթության բնագավառում համագործակցության մասին գործնական ծրագրեր, որոնցում կնշվեն այդ ժամանակահատվածում նախատեսված միջոցառումները, ինչպես նաև դրանց իրականացման համար ֆինանսական պայմանները:

Հոդված 8

Իրենց ներքին օրենսդրության համաձայն՝ Կողմերը կերաշխավորեն իրենց քաղաքացիների հեղինակային իրավունքների փոխադարձաբար պաշտպանությունը:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ կմտնի Կողմերի միջև անհրաժեշտ փաստաթղթերի փոխանակումից 30 օր հետո: Համաձայնագիրը կնքված է անորոշ ժամկետով և դադարում է գործել այդ մասին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալուց վեց ամիս հետո:

Կատարված է Երևան քաղաքում 1998 թվականի հունիսի 30-ին, երկու բնօրինակով, հայերեն և իսպաներեն, ընդ որում երկուսն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի հոկտեմբերի 6-ից: